CHAARAT

«ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«CHAARAT KAPAN»
CLOSED JOINT STOCK COMPANY

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն
3302, Սյունիքի մարզ, ք. Կապան,
Գործարանային փող., 4 շենք

4 Gortsaranayin Street, Kapan,
Syunik Region 3302, Republic of Armenia

№ 206

«18» 06 2019թ.

«Հետք» թերթի լրագրող
Քրիստինե Աղալարյանին

Հարգելի Քրիստինե Աղալարյան,

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունիսի 4-ի հարցման, տեղեկացնում ենք.

«Չաարատ Գոլդ Հոլդինգս» ընկերության վերաբերյալ Ձեր կողմից բարձրացված 1-3 կետերով թվագրված հարցերին **«Չաարատ Կապան» ՓԲԸ-ն** իրավասու չէ պատասխանել, քանի որ դրանք վերաբերում են «Չաարատ Գոլդ Հոլդինգս» ընկերությանը: «Չաարատ Գոլդ Հոլդինգս» ընկերությանը վերաբերող տեղեկատվությունն ու կոնտակտային տվյալները հասանելի են https://www.chaarat.com/ կայքում:

«Կապանի լեռնահարստացան կոմբինատ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն, ներկայիս անվանումը՝ **«Չաարատ Կապան» ՓԲԸ**) գործունեությանն անմիջականորեն վերաբերվող հարցերի մասով հայտնում ենք հետևյալը.

4-րդ հարցի վերաբերյալ. Շրջակա միջավայրի վրա տեխնոլոգիական գործընթացների ազդեցության նվազեցումը մեր ընկերության առաջնահերթություններից է: Ընկերությունում ներդրված է բնապահպանական կառավարման համակարգ (ԲԿՀ), որն ի դեպ 2018 թ-ին հավաստագրվել է Bureau Veritas Certification–ի անկախ աուդիտորների կողմից՝ համաձայն ISO 14001:2015 միջազգային չափորոշիչներին, համապատասխանում է միջազգային առաջատար պահանջներին: Այն նախատեսված է ռեսուրսներն և էներգիան ռացիոնալ օգտագործելու, շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու, ժամանակակից սարքավորումներ ու տեխնոլոգիաներ օգտագործելու, ինչպես նաև աշխատակիցների ներգրավման միջոցով շրջակա միջավայրի հանդեպ անհատական պատասխանատվությունը բարձրացնելու համար: ԲԿՀ շրջանակներում իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդող հավանական գործոնների վերլուծություն և կանոնավոր մշտադիտարկում: Վերլուծությունների արդյունքում մշակվում և իրականացվում են միջոցառումներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման և կանխարգելման ուղղությամբ:

5-րդ հարցի վերաբերյալ. Ինչ վերաբերվում է Գեղանուշի պոչամբարին, ապա վերջինիս հետագա շահագործումն էլ ավելի անվտանգ դարձնելու, միջազգային չափանիշներին համապատասխան տեխնիկական առավել արդյունավետ լուծումներ կիրառելու ուղղությամբ «Չաարատ Գոլդ Ինթերնեշնլ Լիմիթիդ» ընկերության հրավերով բրիտանական SRK consulting խորհրդատվական կազմակերպության ներկայացուցիչներն իրականացրել են մի շարք ուսումնասիրություններ՝ IFC ստանդարտների համապատասխանության տեսանկյունից: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները մեզ փոխանցելուց

+374 285 59 215
info@chaarat.am
www.chaarat.com

հետո, ինչպես այլ ասպեկտներով, նաև պոչամբարի մասով հաշվի են առնվելու առաջարկվող նոր մոտեցումները և լուծումներն անպայմանորեն ներառվելու են պատվարի ամրացման աշխատանքների նախագծում:

6-րդ հարցի վերաբերյալ. Ընկերությունը շահագործում է Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը՝ ստորգետնյա եղանակով: Հանքավայրից հանված հանքաքարը ենթարկվում է ջարդման, մանրացման, ֆլոտացման, և որպես արտադրանք արտահանվում է ոչ թե հանքաքար, այլ ստացված պղնձի և ցինկի խտանյութեր՝ ոսկու պարունակությամբ: Արտադրանքը վաճառվում է միջազգային շուկայում:

Հարգանքով՝

Սուրեն Եգանյան
Գլխավոր տնօրենի լիազորված անձ

ՀԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ» 09416902 «ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ» «CHAARAT KAPAN»